ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ «ՍԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ <<Խմբային աշխատանքի առանձնահատկությունները առարկայի ուսուցման գործընթացում >>

<<Դասերի պլանավորում խմբային աշխատանքի կիրառմամբ>>

ԱՌԱՐԿԱ՝ Տարրական դասարանների ուսուցիչ

ՀԵՂԻՆԱԿ՝ Սևադա Ասրյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝Սիսիանի հ.5 հիմնական դպրոց

ՂԵԿԱՎԱՐ՝ ՖԼՈՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. 3

ԳԼՈՒԽ 1

ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑ. 5

ԳԼՈՒԽ 2

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՍ

ԴԱՍԻ ՆՄՈՒՇ ՕՐԻՆԱԿՆԵՐ. 6

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ. 23

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ. 25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցը սոցիալ–մանկավարժական համակարգ է, որի կրթական միջավայրում աշակերտներն ինտեգրվում են ուսումնական, սոցիալ–մշակութային և

հոգեբանական հարմարման արդյունքում: Սովորողների՝ կրթական միջավայրում ակտիվ ինտեգրման գործընթացում ձևավորվում են ուսումնական գործունեության արդյունավետ իրականացման կարողություններն ու հմտությունները, խմբային և անհատական ուսումնահետազոտական աշխատանքի ձևերի յուրացումը:

Կան տարբեր մեթոդներ, որոնք ամրապնդում են ուսուցիչ–սովորող ուսումնական կապը դասընթացի ընթացքում և հանգեցնում ավելի լավ արդյունքների: Դրանցից մեկը համարվում է խմբային աշխատանքների կիրառումն առարկայի դասավանդման ընթացքում:

«Որպեսզի ուղեղը սովորի, անհրաժեշտ է զգացմունքներ արթնացնել, հուզել», – պնդում են ուղեղի նեյրոդիդակտիկայով զբաղվող գիտնականները: Նրանք ունեն բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք ապացուցում են՝ խմբային աշխատանքի կիրառման և դրա ժամանակ առաջացած հուզական, նաև մրցակցային զգացողություններն օգնում են ուղեղի ընկալունակությանը: Ուսուցման նոր միտումներից է այսպես կոչված նեյրոդիդակտիկան, որն ունի մեկ առանցքային մոտեցում. չկա ուսուցում առանց զգացմունքների[1] :

Առանց ծավալվելու նեյրոդիդակտիկայի և ուսման մեջ զգացմունքների կարևորության տեսական հարցերի շուրջ (քանի որ դա շատ հետաքրքիր, բայց առանձին քննարկում պահանջող թեմա է), սույն հետազոտական աշխատանքում անդրադարձ կկատարվի խմբային աշխատանքի կիրառման փորձին, նկարագրին և ուսումնական գործընթացի վրա թողած ազդեցությանը:

Դասընթացների կազմակերպման ժամանակ շատ հաճախ դասավանդողների առջև ծառանում է այն խնդիրը, թե ինչպես սովորողների մեջ առաջացնել հետաքրքրություն առարկայի նկատմամբ, ինչպես նրանց լիարժեք ներառել ուսումնական գործընթացի մեջ և դրդել լինել ավելի ակտիվ: Հաճախ առաջանում են իրավիճակներ, երբ սովորողների հետ աշխատելու ավանդական եղանակները չեն

[1]Տես՝ Աստվածատրյան Ա., Վարդումյան Ս. և ուրիշներ, Ուսուցիչների վերապատրաստման գործընթացի կատարելագործումը, Ձեռնարկ ուսուցիչների վերապատրաստման համար, Ե., Այռեքս., 2003:

օգնում: Ուսման մեջ խմբային աշխատանքի կիրառման անժխտելի արդյունավետությունը, կարծում ենք, հենց այս փաստի վրա է հիմնված:

Սահմանենք մեր աշխատանքի նպատակը : Հետազոտության նպատական է՝ բացահայտել խմբային աշխատանքի էությունը, առանձնահատկությունները առարկայի ուսուցման գործընթացում, սովորողների մեջ ձևավորել համագործակցային կարողունակություններ: :

ԳԼՈՒԽ 1

ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑ

Համագործակցային ուսուցման գաղափարաբանությունը մանրակրկիտ մշակվել է ամերիկյան մանկավարժների երեք խմբի կողմից (Ջ. Հոփկինսի համալսարան՝ Ռ. Սլավին, Մինեսոտայի համալսարան՝ Ջոնսոն եղբայրներ, Կալիֆոռնիայի համալսարան՝ Ջ. Արոնսոն):

Այսօր արդեն ամբողջ աշխարհում համագործակցային ուսուցումը դիտարկվում է որպես ավանդական մեթոդներով ուսուցման գործընթացի լավագույն այլընտրանք: Համագործակցային ուսուցման նպատակները չեն սահմանափակվում միայն գիտելիքների ձեռքբերմամբ, այստեղ առաջնային են նաև սոցիալական հմտությունների, փոխհաղորդակցական կարողությունների ձևավորման լայն հնարավորությունները: Միայն համագործակցային ուսուցման դեպքում են երեխաները լայն հնարավորություն ունենում միասին աշխատելու, սովորելու, ստեղծագործելու, իրար օգնելու[2]:

Համագործակցային ուսուցման հիմնական գաղափարը միասին սովորելն է, այլ ոչ թե ինչ-որ մի բան միասին կատարելը: Պետք է միշտ նկատի առնել այն հանգամանքը, որ աշակերտներին մի սենյակում նստեցնելը, մի խմբում ընդգրկելը, նույն առաջադրանքը տալը դեռևս բավարար չեն համագործակցային ուսուցման մասին խոսելու համար: Ոչ բոլոր խմբերը կարելի է համարել համագործակցային:

Փոքր խմբերով աշխատանքներ կիրառելու սկզբնական փուլում համագործակցային ուսուցման հավանականությունը նվազ է: Բայց պետք է հետևողականորեն ձգտել համագործակցային ուսուցման մթնոլորտի ստեղծմանը, որպեսզի արդարացված ու արդյունավետ լինի փոքր խմբերով աշխատանքը:

Կրթության հայտնի տեսաբաններ Ժան Պիաժեն, Լև Վիգոտսկին և ուրիշներ, պնդում են, որ երեխայի մտավոր զարգացման գործում սոցիալական փոխազդեցությունն ու միջանձնային հաղորդակցությունը կարևոր գործոններ են:

---

[2]Տես՝ Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, տեսություններ, մեթոդներ, գնահատում, Ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար, Այռեքս, Ե., 2003:

Համագործակցային ուսուցման կարևորագույն ձեռքբերումներն են՝

1. *անձի զարգացումը և անհատականության ձևավորումը.*
2. *հոգեբանական և ֆիզիկական առաղջության ապահովումը.*
3. *սթրեսի հաղթահարումը.*
4. *շրջապատողների հետ առողջ փոխհարաբերությունների կառուցումը:*

Դասի բոլոր փուլերում պիտի ապահովվեն համագործակցային ուսուցման հետևյալ տարրերը՝

- *դրական փոխկախվածություն.*
- *դեմ առ դեմ փոխազդեցություն.*
- *անհատական հաշվետվություն և պատասխանատվություն.*
- *միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ.*
- *խմբային գործընթաց/ մշակում.*
- *փոխներգործուն կամ ինտերակտիվ առաջադրանք:*

Համագործակցային ուսուցումն ակնկալում է ուսուցչի դերի փոփոխություն. ուսուցիչն առաջնորդում և ուղղորդում է դասարանը՝ ստեղծելով փոխադարձ վստահության մթնոլորտ և համագործակցությունը խթանող միջավայր: Ուսուցիչը հրամայողից վերափոխվում է հրահանգչի, աջակցողի և դիտարկողի:

Համագործակցային ուսուցման ընթացքում ուսուցիչը ստանձնում է մեծ թվով պարտականություններ՝

- դասերի, վարժությունների, առաջադրանքների պլանավորում.
- սովորողների խմբերի ձևավորում.
- սովորողների տեղաբաշխում.
- առաջադրանքի ներկայացում, և բացատրում.
- խմբային աշխատանքի հսկողություն և անհրաժեշտության դեպքում միջամտություն.
- օգնություն սոցիալական հմտությունների զարգացման հարցում.
- գնահատում:

—

ԳԼՈՒԽ 2

ԴԱՍԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿՆԵՐ

1. Առարկա ՝ Ես և շրջակա աշխարհը

Դասարան՝ 4-րդ,

Դասի թեման՝ Ես և հասարակությունը

Դասի տեսակը՝ թեմայի ամփոփում

Նպատակը՝ ամփոփել ստացած գիտելիքների պաշարը, զարգացնել բանավոր և գրավոր խոսքը, ինքնուրույն և խմբային աշխատելու կարողություններ ձևավորել

Դասի վերջնարդյունքները՝ կներկայացնեն իրավունքները,պարտականությունները և դրանց փոխկապվածությունը

Կհիմնավորեն ընկալումների բազմազանությունը հարգելու անհրաժեշտությունը

Կմեկնաբանեն մարդկանց փոխհարաբերություններում հավասարության,արդարության,ազնվության,բարեկամության և խաղաղության կարևորությունը

Խաչվող հասկացություններ՝Պատճառ և հետևանք,ժամանակ և տարածություն

Միջոցները՝ դասագիրք, աշխատանքային տետր, տեսանյութ,պաստառ, գունավոր նշագրիչներ, հագուստներ, երգեր:

Մեթոդները՝ զրույց, մտագրոհ, մտածիր, զույգ կազմիր, դերային խաղ, 3 րոպեանոց շարադրանք, շրջագայություն պատկերասրահում:

Մուտքի խոսք

Դասը սկսում եմ հարցման միջոցով:
ուսուցիչ՝ սիրելի՛ աշակերտներ. դուք մեր սիրելի դպրոցի մի մասնիկն եք, այս հասարակության անդամը. դուք ունեք հավասար իրավունքներ և պարտականություններ: Դրանք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ: Այսօր մենք կանդրադառնանք այն հասարակությանը, որտեղ դուք ապրում եք, միասին կուսումնասիրենք ձեր իրավունքներն ու պարտականությունները: Իսկ ի՞նչ եք կարծում , արդյոք ինչպիսի՞ իրավունքներ դուք ունեք: Միասին մեկ թիմ դառնանք և գտնենք այս հարցի պատասխանը:

Ձեռք են բարձրացնում աշակերտները.

Աշակերտ՝ կրթության իրավունք.

Աշակերտ՝ խոսքի ազատության իրավունք,

Աշակերտ՝ ծնողների հետ ազատ շփման

Ուսուցիչ՝ իհարկե դուք իրավացի եք, իսկ այժմ պատկերացնենք , որ բախվում են մարդկանց իրավունքները:

Արամը դաս է սովորում, իսկ նրան անընդհատ խանգարում է քույրիկը և ուզում է խաղալ Արամի հետ, այս դեպքում կարելի՞ է ասել, որ քույրիկը խախտում է եղբոր իրավունքները և ի՞նչ լուծում կարելի է գտնել:

Աշակերտ՝ խախտվում են Արամի իրավունքները, կարելի է փոքր-ինչ խաղալ քույրիկի հետ և հետո շարունակել դաս սովորել:

Ուսուցիչ՝ լավ լուծում է: Հաջորդ իրավիճակն այսպիսինն է. Հայկը հեծանիվ է վարում , իսկ Արամը փակում է նրա ճանապարհը, ի՞նչ եք կարծում արդյոք Արամն իրավացի՞ է և ինչ լուծում կառաջարկեք:

Աշակերտ՝ երևի Արամն ուզում է Հայկի հեծանիվը վարել, թե չէ ինչու՞ պետք է փակի ճանապարհը, ճիշտ կլինի, որ Հայկը Արամին թույլ տա մի քիչ վարել իր հեծանիվը և այս դեպքում ոչ ոքի իրավունքները չեն ոտնահարվի:

Ուսուցիչ՝ իսկապես որ այսպես ավելի լավ կլինի: Սիրելի՛ աշակերտներ , մարդիկ իրավունքներից բացի ունեն նաև պարտականություններ: Եկեք անդրադառնանք ձեր պարտականություններին: Դուք պարտավոր եք՝

Աշակերտ՝ հաճախել դպրոց,

Աշակերտ՝ ենթարկվել դպրոցի կանոնակարգին,

Աշակերտ՝ ստանալ գիտելիքներ

Աշակերտ՝ ձեռք բերել հմտություններ և կարողություններ,

Ուսուցիչ՝ թերևս ամենից կարևորներին դուք տիրապետում եք: Իսկ դուք գիտե՞ք , որ մեր իրավունքներն ու պարտականությունները մեզանից անբաժան են և նույնիսկ հեքիաթներում, առակներում և այլ ստեղծագործություններում էլ դրանք կան: Եկեք անդրադառնանք մի քանիսին: Հովհաննես Թումանյանի « Ոսկու կարասը» հեքիաթում ու՞մ էր պատկանում կարասը, ով էր փորձում տիրանալ ոսկուն, ինչպե՞ս լուծվեց ստեղծված իրավիճակը:

Աշակերտ՝ Հարևանը հարևանին հող է տալիս վարելու, վերջինս այնտեղ ոսկու կարաս է գտնում և որոշում է, որ այդ կարասն իրենը չէ, այլ նրանն է ում պատկանում է հողատարածքը: Բայց գյուղացիները սկսում են վիճել արդյոք դա գտնողինն է, թե նրանն է ում պատկանում է հողը: Երբ չեն կարողանում վեճը լուծել որոշում են թագավորին դիմել, թագավորն էլ ասում է , որ կարասն իրենն է քանի որ ինքն է թագավորը և այդ երկրի տերը, բայց երբ ցանկանում է տիրանալ, ոսկու փոխարեն օձեր են հայտնվում կարասում, բարկացած թագավորը կարծում է, որ գյուղացիներն իրեն խաբում են, սակայն դիմելով իր իմաստուններին ստանում է հարցի պատասխանը. այդ ոսկին գյուղացին արդար աշխատանքով է վաստակել, ուրեմն դա հենց նրան էլ պատկանում է: Իմաստունների խորհրդով էլ ոսկու կարասը բաժին է ընկնում գյուղացիների զավակներին հարսանիքից հետո:

Ուսուցիչ՝ իսկ դուք համամի՞տ եք նման որոշման հետ, դուք ի՞նչ լուծում կառաջարկեք:

Իրականացվում է շրջագայություն պատկերասրահում: Առանձին խմբերով ներկայացվում են հեքիաթները. ծավալվեց այսպիսի զրույց խմբերի միջև:

Աշակերտ՝ իմ կարծիքով ոսկու կարասը նրանն էր ով վարել էր հողը և գտել:

Աշակերտ՝ բայց այդ հողը իրեն չէր պատկանում:

Ուսուցիչ՝ բոլորդ էլ ունեք ազատ կարծիք արտահայտելու իրավունք և բոլորդ էլ իրավացի եք: Էլ ի՞նչ ստեղծագործություններ կհիշե՞ք:

Աշակերտ՝ «Խոսող ձուկը», ձկնորսը ոտնահարում է ձկնիկի իրավունքները, նրան բռնում է, զրկում է ազատությունից, սակայն ուղղում է իր սխալը և ազատ արձակում:

Աշակերտ՝ «Տերն ու ծառան» հեքիաթում տերը ցանկանում է շահագործել ծառային, նրան շատ աշխատեցնել և քիչ վարձատրել,

Աշակերտ՝ «Շունն ու կատուն» հեքիաթում կատուն շանը խաբում է , մորթին վերցնում է և գդակը չի կարում:

Աշակերտ՝ «Պոչատ աղվեսը» հեքիաթում , տատիկը կտրում է աղվեսի պոչը և այն չի տալիս, մինչև որ աղվեսը թափած կաթը ետ չի բերում:Ուսուցիչ՝ բոլոր օրինակներն էլ ճիշտ են, իսկ ի՞նչ եք կարծում , ձեր կարծիքը ճիշտ կարող է լինել դիմացինի համար, դիմացինն իր կարծիքն ունի՞ և նրա կարծիքը կարո՞ղ է տարբերվել ձեր կարծիքի:

Աշակերտ՝ իհարկե կարող է, բոլորս էլ տարբեր ենք մտածում, մեկի ասածը ընդունելի կարող է լինել, իսկ մյուսինը ՝ ոչ:

(աշակերտները շարադրում են տարբեր պատասխաններ)

Իրականացնում ենք զույգերով աշխատանք:

Ուսուցիչը բաժանում է փոքրիկ թղթեր, աշակերտական սեղանին նստող զույգը կատարում է աշխատանքը. դասընկերները նկարագրում են միմյանց : Ուսուցիչը գրատախտակին ցույց է տալիս պաստառ N1:

Ուսուցիչ՝ սիրելի աշակերտներ. նայելով ահա այս պաստառին նկարագրեք ձեր կողքի նստածին. պաստառի վրա գրված են այս կետերը:

1. նրա արտաքինը(մազերի, աչքերի գույնը,ձևը, քթի ձևը, մաշկի գույնը, հասակը և այլն)

2. նկարագրեք նրա բնավորությունը,

3. արդյոք ինչպիսի՞ն կուզեիք , որ նա լիներ.

Աշխատանքն իրականացնելու համար տրվում է 3 րոպե ժամանակ և այդ ընթացքում հնչում է որևիցե երգ:

Ժամանակը լրանալուն պես աշակերտները ներկայացնում են աշխատանքը:

Ուսուցիչ ՝ մենք տեսանք , թե որքան տարբեր եք դուք բոլորդ, թեպետ ունեք քիթ, բերան, աչքեր , բայց նույնիսկ դրանք են տարբեր, տարբեր են ձեր բնավորության գծերը և եթե դուք սովորում եք այս նույն դասարանում ապա պետք է լինեք հանդուրժող ,որովհետև մեզանից յուրաքանչյուրն ունի իր արտաքին տեսքը և իրեն բնորոշ բնավորության գիծը, սա մեր փոքրիկ հասարակությունն է և այն հասարակությունը, որն ավելի մեծ է և այս դասարնից դուրս , ոչնչով չի տարբերվում , այնտեղ էլ բոլորս տարբեր ենք և յուրահատուկ, բայց մի բան հստակ է, բոլորի ժպիտը նույնն է , այն գեղեցիկ է և գեղեցկացնում է մեզանից յուրաքանչյուրին , դե ուրեմն ժպտանք:

Հնչում է « Դե ժպտա» երգը:

ՄԵՂԵԴԱՅԻՆ ԴԱԴԱՐ

Երգում են բոլորը և շարունակում ենք այսպես:

Ուսուցիչ՝ մենք թվարկեցինք մեր ընկերների դրական և բացասական բնավորության գծերը: Անշուշն դրականն ավելի կարևոր է և այն օգնում է մարդուն լինել ավելի լավը, եկեք թողնենք միայն դրականը և մոռանանք բացասականի մասին: Մոտենանք գրատախտակին և լրացնենք այս պաստառ N2-ը:

Ուսուցիչը գրատախտակին ցույց է տալիս մի պաստառ, որի վրա նկարած է մի երեխա, աշակերտները պետք է մոտենան և գրեն բոլոր դրական հատկանիշները նշագրիչների օգնությամբ: Ընտրում ենք վառ գույներ ունեցող նշագրիչ: Աշակերտները վերհիշելով իրենց ընկերների դրական կողմերը մեկ-մեկ մոտենում են և լրացնում: Պաստառի վրա հայտնվում են ՝ ընկերասեր, հանդուրժող, բարի, ժպտերես, խաղաղասեր, խոհեմ և այլ բառեր : Ապա ուսուցիչը հարցնում է.

Ուսուցիչ՝ կուզենայի՞ք , որ ձեր դասընկերներն ունենային մարդկային այսպիսի որակներ, նման լինեին այս երեխային:

Բոլորը միաձայն պատասխանեցին՝ «այո՛».

Ուսուցիչ՝ դե ուրեմն նախ ինքներս պետք է լինենք այսպիսի , որ ձեր այս փոքրիկ հասարակությունը լինի լավագույնը, իսկ եթե այսպիսի փոքրիկ հասրակություններ շատ լինեն ապա մեծ հասարակությունն էլ կլինի այսպիսի: Մեր յուրաքանչյուրիս պարտքն է լինել մեր հայրենիքի արժանի զավակը, որովհետև դուք ձեր հայրենիքի ապագան ենք, նրա այսօրն ու վաղն եք, ձեզանից յուրաքանչյուրը Հայաստանի մի հենասյունն է. եկեք բեմադրությամբ ներկայացնենք մեր հայրենիքի ապագան և թե ինչ է նշանակում լինել հայրենիքի հենասյունը:

Ուսուցիչը երեխաներին բաժանում է իրենց դերերը և տալիս ժամանակ բեմադրությանը պատրաստվելու համար:

Դասի նմուշօրինակ 2

ԴԱՍԱՐԱՆ՝ 4-րդ

ԱՌԱՐԿԱ՝ Մայրենի

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝ Ա՛յ քեզ բան. ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում՝ ՀԱ՛Յ-ՐԵ՛-ՆԻ՛Ք է

ԴԱՍԻ ՏԵՍԱԿԸ՝ ամփոփման դաս

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 45 րոպե

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ՝ ամփոփել ստացած գիտելիքների պաշարը թեմայի վերաբերյալ, գիտելիքները վերածել կարողությունների և հմտությունների, ինքնուրույն և խմբային աշխատելու կարողություններ և հմտություններ ձևավորել,հարստացնել բառապաշարը, գրագետ բանավոր և գրավոր խոսք կառուցել:

Վերջնարդյունքներ՝ արտահայտիչ կարտասանեն չափածո և արձակ գրական ստեղծագործություններից հատվածներ

Կգտնեն տեղեկություններ առաջադրված հարցերին պատասխանելու համար

Կօգտվեն բառարաններից,մանկական հանրագիտարաններից,ուսումնական ձեռնարկնրից

Խաչվող հասկացություններ՝ Պատճառ և հետևանք,ժամանակ և տարածություն

ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ ԲԱԶՄԱՆԻՍՏ, ՈՒՂՂՈՐԴՈՂ ՀԱՐՑԵՐ, ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀՈՒՄ, ԵՐԵՔ ՁԱՐԿ,

ՄԻՋՈՑՆԵՐԸ՝ դասագիրք, աշխատանքային տետր , բառատետր, պաստառներ, գունավոր նշագրիչներ և մատիտներ, կախարդական արկղիկ, Հայաստանի խորհրդանիշներ.

ԿԱՀԱՎՈՐԱՆՔ՝ դասարանի յուրաքանչյուր անկյունում դրված է մեկական փոքրիկ սեղանին, սեղանին պաստառներ , նշագրիչներ և մատիտներ, աշակերտների սեղաններին դրված են Հայաստանի խորհրդանիշները կամ այնպիսի առարկաներ, որոնք կապ ունենք Հայաստանի հետ. օրինակ՝ Մովսես Խորենացու ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, Աստվածաշունչ, խաչ, Շիշեռնակաբերդի հուշաամալիրի էսքիզ, նուռ, ծիրան և այլն:

ԸՆԹԱՑՔԸ՝ դասր մեկնարկին հնչում է Հայաստանի օրհներգը՝ միայն սկիզբը և ավարտը, բոլորը կանգնած երգելուց հետո ողջունում են ուսուցչին և զբաղեցնում իրենք տեղերը: Ուսուցիչը հայտնում է, որ այսօրվա դասը նվիրված է մեր հայրենիքին: Ուստի գրատախտակին, որպես մեկնաբառ, գրում է ՀԱՅՐԵՆԻՔ բառը: Իրականացնում ենք ԲԱԶՄԱՆԻՍՏ մեթոդը՝ լրացնելով աշակերտների հետ: Ուսուցիչը հարցնում է թե ի՞նչ բառեր հայտնվեցին նրանց մտքում, երբ ինքը ասաց ՀԱՅՐԵՆԻՔ, լսում ենք բոլորի պատասխանները, բայց գրի ենք առնում միայն առաջին երկու բառըԼԱյդպես շարունակաբար լրացնում ենք բազմանիստը՝ այդ երկու բառին ավելացնելով ևս երկուսը, այդ երկուսին ՝ մեկական և վերջում մեկ բառով փակում ենք բազմանիստը:



ուսուցիչը մեկ-մեկ հրավիրում է աշակերտներին գրատախտակի մոտ և յուրաքանչյուրը այս բառերից որևիցե մեկով կամ արմատներից որևէ մեկով նոր բառ է կազմում:

հայրենիք- հայրենական

ընտանիք- ընտանեկան,

Հայաստան- հայաստանյան,

Ծնողներ- ծնողական,

Տուն-տնային,

Սեր- սիրելի,

Պետություն- պետական,

Օջախ- օջախային

Բնօրրան- մեղմօրոր, բնավեր

Բազմանիստն ամփոփում է այս թեմայի բոլոր կարևոր բառերը:

Այնուհետև իրականացնում ենք խմբային աշխատանք՝ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀՈՒՄ. դասարանը բաժանում ենք չորս խմբի և յուրաքանչյուր խմբին տրվում է դասարանի մի անկյունը: Խմբերը պետք է պաստառին նկարեն Հայաստանի որևիցե խորհրդանիշ և ներկայացնեն այդ խորհրդանիշը: Նախապես արդեն պայմանավորվում ենք աշակերտների հետ և նրանց տալիս նյութերը, որպեսզի յուրացնեն. ուսուցիչը տալիս է յուրացնելու բոլոր չորս խորհրդանիշները բոլորին էլ, բայց երբ սկսվում է խմբային աշխատանքը նա արկղից հանում է բառերը մեկ-մեկ և հանձնարարում այս կամ այն խմբին հենց այդ խորհրդանիշը: Այսպիսով ուսուցիչն ասում է . այս արկղում կան չորս բառեր. խաչ, նուռ, դրոշ,լավաշ. ես հանում են մեկ – մեկ և պարզում ենք, թե որ խումբը ինչ է նրկայացնելու:

առաջին խումբը ներկայացնում է լավաշը. երկրորդ խումբը՝ նուռը, երրորդ խումբը ՀՀ դրոշը և չորրորդ խումբը՝ խաչը:

Հնչում է Կոմիտասի ԿԱՔԱՎԻԿ երգը և քանի հնչում է աշակերտները աշխատում են . ժամանակը լրանալուն պես ուսուցիչը սկսում է շրջել պատկերասրահում. մոտենում է խմբերին և լսում նրանց խոսքը:

Առաջին խումբը ներկայացնում է լավաշ հացը.

Հացը հնագույն պատրաստված սննդամթերքներից է:

Հիմնականում օգտագործվում է ցորենի և աշորայի, սակավ՝ եգիպտացորենի և գարու այլուրը հաց պատրաստելու համար:

Հայկական հացի տեսակ է լավաշը: Ըստ ավանդության՝ հին Հայաստանում Արամ անունով մի արքա է եղել, որը կռվի ժամանակ գերի է ընկել ասորիների թագավոր Նոսորին: Ըստ նրա պայմանի՝ Արամ արքան պետք է 10 օր անոթի մնա, իսկ 11-րդ օրը նետաձգությամբ մրցի իր հետ, եթե հաղթի, ազատ կարձակվի և յուրայինների մոտ կգնա արքայավայել ընծաներով: Հաջորդ օրը Արամ արքան պահանջեց, որ ասորաց սահմանի մոտ կանգնած հայկական բանակից բերեն իր ամենագեղեցիկ լանջապանակը: Հայերը գլխի ընկան, որ իրենց արքան ինչ-որ բան է ակնարկում, իսկ ասորիներն էլ չգիտեին, որ լանջապանակի մեջ նրբաթերթ հաց է դրված: Այն ժամանակ ոչ ոք չգիտեր լավաշի մասին, իսկ ասորի բանբերների մտքով չէր էլ անցնի, թե հայերը կարող են զրահի մեջ հաց թաքցնել: Արամը ստացավ իր զրահը, բայց ասաց, որ սա չի իր ամենագեղեցիկ լանջապանակը, պահանջեց մեկ ուրիշը, և ասորի բանբերները 9 օր շարունակ գնում-գալիս էին՝ առանց իմանալու, որ իրենց բերած լանջապանակներով ամեն օր մի նրբաթերթ հայկական հաց են հասցնում Արամ արքային:11-րդ օրը Արամն ու Նոսորը մրցասպարեզ մտան: Նոսորին թվում էր, թե 10 օր սոված մնալով՝ Արամն ուժասպառ է եղել, սակայն հայոց արքան իրեն կայտառ էր զգում: Հայկական հացը նրան ուժ էր տվել, նա հաղթեց մրցության մեջ և տուն վերադարձավ պատվով: Վերադարձավ ու հրովարտակ արձակեց, որ այսուհետ Հայաստանում հաստ ու բազմաձև հացերի փոխարեն լավաշ թխեն: Այդ ժամանակներից ի վեր լավաշը դարձավ հայոց հացերի արքան:

Հնչում է լավաշի երգը .

https://mp3raxs.ru/download/oUMybDAWQQb_%D5%AC%D5%A1%D5%BE%D5%A1%D5%B7%D5%AB-%D5%BA%D5%A1%D6%80/ երգի կայքն է. մի հատված երգելուց հետո.

մոտենում ենք երկրորդ խմբին:

երկրորդ խումբը նկարել է նուռ.

Արարատյան թագավորության ժամանակաշրջանում նուռը պաշտվել է իբրև կենաց ծառի պտուղ: Քրիստոնեության շրջանում մինչև Է դարը նռան պատկերագրություն չունենք, բացառություն է այս առումով Զվարթնոցի տաճարը: Պահպանված միակ վկայությունը քարե մի այուն է նռան պատկերով, որը գտնվել է Սարդարապատում: Այն Հիսուս Քրիստոսի խորհրդապատկերն է, խորհրդանշում է հրաշափառ հարությունը, Աստծո շնորհների բազմազանությունը, Տիրամորը, դրախտի պտուղը և այլն: Ըստ ավանդություններից մեկի՝ Նոյը տապանը փակեց հենց նռով: Նուռը

նաև Եկեղեցու խորհուրդն ունի: Նռան հատիկները պատված են պինդ կեղևով: Այդպես էլ Քրիստոսի Եկեղեցին է, որի անդամները շատ ու բազմատեսակ են, բայց միավորված մեկ Եկեղեցու մեջ:
Իսկ հայ մեկնաբանական գրականության մեջ նուռը խորհրդանշում է Հին Կտակարանի դառնությունը, որի քաղցրությունը երևաց Ավետարաններում և Եկեղեցում, ինչպես նաև մարգարեների խոսքերն ու արդարների փրկությունը:
Հայկական ավանդության մեջ նուռը կյանքի, ծաղկման, առատության և ամուսնության խորհուրդն ունի: Նռան խորհրդաբանությունն օգտագործվել է նաև հայկական ճարտարապետության, գորգագործության, կիրառական արվեստում և մանրանկարչության մեջ:

Երրորդ խումբը ներկայացնում է ՀՀ դրոշը.

Հայաստանի պետական խորհրդանիշներն են զինանշանը, օրհներգը և դրոշը: Մեր դրոշը եռագույն է. կազմված է կարմիր , կապույտ և ծիրանագույն գույներից:

Կարմիր գույնը խորհրդանշում է Հայկական բարձրավանդակը, հայ ժողովրդի մշտական պայքարը հարատևման, քրիստոնեական հավատքի, Հայաստանի անկախության և ազատության համար: Կապույտ գույնը խորհրդանշում է հայ ժողովրդի ապրելու կամքը խաղաղ երկնքի ներքո: Նարնջագույնը խորհրդանշում է հայ ժողովրդի արարչական տաղանդը և աշխատասիրությունը:Այսօրվա եռագույն դրոշը շատ քիչ նմանություն ունի նախկին հայկական դրոշների հետ: Հին ժամանակներում, բանակները գնում էին կռիվների՝ առջևից սյուների վրա տանելով փորագրված ժայռաբեկորներ: Փորագրությունները կարող էին ներկայացնել վիշապ, արծիվ, վագր կամ ինչ-որ խորհրդավոր աստվածային օբյեկտ: Քրիստոնեության ընդունման հետ, հայկական տերությունը փոխառեց շատ տարբեր դրոշներ, որոնք ներկայացնում էին տարբեր դինաստիաներ: Արտաշեսյան դինաստիայի դրոշը, օրինակ, բաղկացած է կարմիր կտորից, որի վրա պատկերված են երկու արծիվ, որոնք նայում են միմյանց և բաժանված են ծաղիկով:

Չորրորդ խումբը նկարել է խաչը:

Խաչը քրիստոնեական խորհրդանիշ և պաշտամունքի առարկա շատ կրոններում: Խաչի ձևը առաջացել է հնուց: Այն կապվում է Քրիստոսի խաչելիության հետ:Խաչի Նշանը պատկերում ենք և՛ տաճարների, և՛ պատերի, և՛ դռների վրա, և՛ երեսներին ու պատկերացնելով մեր մտքերում հատուկ ուշադրությամբ, որովհետև այդ մեր փրկության նշանն է, ընդհանուր ազատության և մեր Տիրոջ խոնարհության Նշանը: Հայերը հնուց խաչ պատկերել են քարերի վրա, այսպիսով էլ առաջացել է խաչքար մշակութային կոթողը: Ասում են , որտեղ խաչքար տեսնես , ուրեմն այնտեղ հայ է եղել:Խաչքարերը հայ Եկեղեցու խորհրդանշանն են: Այն արձանի նման դյուրաբեկ չէ, ոչ էլ խճանկարի նման շուտ քայքայվող, կամ պատկերի նման հեշտ եղծանելի: Որքան էլ բարբարոսություն գործադրված լինի նրա վրա, դարձյալ

պահում է խաչքարի հանգամանքն ու դերը: Մի երեսի վրա են քանդակել միայն. սկզբնական շրջանում դրանք եղել են ավելի պարզ , հետզհետե ծաղկեցնելով, ուշ միջնադարում անգերազանցելի քարեղեն «ասեղնագործության» վերածվելու համար: Հայոց խաչքարերի վրա կա հոյակապ հորինվածք, հսկա ճարտարություն և անհատնում աշխատանք:

Հայկական խաչքարերի հատկանշանական երևույթներից մեկն էլ այն է, որ նրա մեջ «կյանք» է մտել, քանզի մեր խաչքարերը ծաղկուն են ու պտղաբեր: Նրանց վերին երեք թևերի ծայրերում բացվելու պատրաստ կոկոններ կան, իսկ ճաճանչների տեղերից հաճախ դեպի դուրս են երկարում նռնաձև պտուղներ: Իսկ խաչբունի ներքևից բարձրանում են խոշոր, ոճավորված տերևներ, որը կենդանության խորհուրդ ունի:

Իսկապես «կենաց փայտ» են մեր խաչքարերը:

Պաստառները փակցնում ենք սթենդին : Աշակերտները զբաղեցնում են իրենց տեղերը: Հասկանալու համար, թե սովորողները որքանով են յուրացրել թեմայի հետ առնչվող նյութերը ուսուցիչը կազմակերպում է զրույց՝ հարցուպատասխան:

Օջախի հիմքը պատմվածքում 3 սուրբ ծերունիներն ի՞նչ էին խորհրդանշում:

Պատասխան՝ սեր, հարստություն, հաջողություն:

Ու՞մ ներս հրավիրեցին տան անդամները:

Պատասխան՝ ներս հրավիրեցին սերը խորհրդանշողին:

Ի՞նչ տեղի ունեցավ , երբ սեր խորհրդանշող ծերունին ներս մտավ.

Պատասխան՝ մյուս ծերունիներն էլ տուն մտան, որովհետև որտեղ կա սեր, այնտեղ կլինի հաջողություն և հարստություն:

Նկարը հայտնվում է էկրանին կամ նախապես պատրաստում ենք պաստառ: Փոխներգործուն միջավայր է ձևավորվում **«Մեր մեծ երջանիկ ՏՈՒՆԸ»** խաղի ժամանակ: Ուսուցչի հանձնարարությամբ սովորողները փորձում են կառուցել իրենց «Երջանիկ տունը»: Այս խաղը կարելի է անցկացնել դարձյալ օգտագործելով

«SmartBoard» գրատախտակը: Այն կարելի է հանձնարարել որպես տնային աշխատանք, որի կատարման համար երեխան կարող է խորհրդակցել ընտանիքի անդամների հետ: Ծնողները կարող են իրենց ներդրումն ունենալ՝ առաջարկելով նոր «քարեր», որոնց դասավորությունը կբնորոշի իրենց **«ՄԵԾ ԵՐՁԱՆԻԿ ՏՈՒՆԸ»:**

Նման տարաբնույթ առաջադրանքների օգնությամբ ծնողներն ակամա մասնակից են դառնում ուսուցման գործընթացին, և ձևավորվում է եռակողմ համագործացություն, ինչը կարևոր պայման է «Դպրոց-ընտանիք» փոխգործակցության համար:

Հովհաննես Շիրազն ինչպե՞ս է բնորոշում մորը:

Պատասխան՝ անգիր ասում ենք բանաստեղծությունը:էջ 54. էկրանին հայտնվում է Ծիրազի և մոր նկարը:

Ներկայացրեք Արշակ պապի հեքիաթը:

Ո՞ր աշխարհամասն է , որ ոչ մի գրքում չես գտնի:

պատասխան՝ Արշակ պապն ասաց, որ տունն է:

ներկայացրեք այն տունը ո՞րն ուզում է տեսնել Արշակ պապը Հակոբիկի նկարում:

Արդյունավետ հարցեր տալը, դասը ճիշտ պլանավորելը, հերթականության պահպանումը, ամենակարևոր հմտություններից մեկն ենք համարում: Նախընտրում ենք հարցերն արդեն տեղադրել Սմարթ գրատախտակի էկրանին, իսկ եթե դրա հնարավորություն չկա, ապա պաստառ պատրաստել և սովորողներին ներկայացնել:



ի՞նչ եք կարծում հայոց լեզուն հային հա՞յ է պահում, ո՞ր բանաստեղծությունից իմացար պատասխանը:

պատասխան՝ անգիր ասել Հովհաննես Շիրազի ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ. էկրանին հայտնվում է հայոց այբուբենը:

Ֆիզկուլտդադարը կարևոր է տարրական և միջին դասարաններուն, նամանավանդ ծավալուն և ժամանակատար աշխատանք կատարելուց հետո.

Պաստառիկ կամ էլեկտրոնային գրատախտակին հայտնվում է թեմային համահունչ աշխատանքը.


բարի գործերի լաբիրինթոս:

Ուսուցիչ՝ վերաշարադրել ԿԱՂԻՆԸ պատմվածքը:

Ձեռք բերած գիտելիքների ամրապնդման նպատակով տրված առաջադրանքի կատարման համար սովորողները պետք է փորձեն «խելացի գրատախտակ»-ի օգնությամբ ինքնուրույն կազմել իրենց ընտանիքի տոհմածառը: Ուսուցչի կողմից ներկայացրած տոհմածառի վրա նրանք պետք է դասավորեն իրենց ընտանիքի անդամների դերերը:



Գիտելիքների ամրապնդման փուլում ՏՀՏ-ի կիրառմամբ աշակերտները կատարում են թեստային աշխատանք:

1. **Ինչպես պետք է իրեն պահի դաստիարակված մարդը**
   - **Ընդհատի մեծերի խոսակցությունը**
   - **Հարգի իրեն շրջապատող մարդկանց**

- Խոսել անծանոթի հետ «դու»-ով

2. Ընտանիքի անդամները կրում են միևնույն
   - Ազգանունը
   - Անունը
   - Հագուստը
3. Նշվածներից որն է ընտանեկան տոն
   - Ընկերոջ ծննդյան տարեդարձը
   - Ամանորը
   - Ծնողական ժողովը
4. Երջանիկ է այն ընտանիքը, որտեղ կա
   - Սեր
   - Հարգանք
   - Անտարբերություն
5. Բոլոր ազգականներին կարելի է միավորել մեկ նկարում, որը կոչվում է
   - Բնապատկեր
   - Տոհմածառ
   - Պարահանդես
6. Ինչպես է կոչվում ամենահարազատ վայրը, որտեղ կա սեր, հոգատարություն, փոխօգնություն
   - Կինոթատրոն
   - Ընտանիք
   - Զբոսայգի

ԵՐԵՔ ՁԱՐԿ մեթոդով ամփոփում ենք դասը.

Առաջին զարկ- ի՞նչ սովորեցինք.

Երկրորդ զարկ- ի՞նչ տվեց այս թեման ինձ:

Երրորդ զարկ- ի՞նչ կտանեմ ինձ հետ կյանք:

Դասարանը բաժանում ենք խմբերի, նրանցից յուրաքանչյուրը մեկ զարկ կլրացնի:

Փակցնում ենք մեծ պաստառ գրատախտակին , որտեղ գրված է՝ ԵՐԵՔ ՁԱՐԿ, աշակերտները մեկ-մեկ մոտենում են գրատախտակին և լրացնում աղյուսակը՝ պատասխանում երեք հարցին էլ:Մոտենում են խմբերով

ԱՎԱՐՏ՝

Ուսուցիչն ասում է՝ ինչ կա չկա այստեղ հայրենիք է:

Այսպես ավարտվում է դասը:

3. ԴԱՍԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ

Առարկա՝ մաթեմատիկա

Դասարան՝ 2

Դասի թեման՝ երկնիշ թվերի գումարումը և հանումը կարգային անցումով.

Դասի տեսակը՝ հաղորդման

Մեթոդները՝ ԽԻԿ, զրույց, մտագրոհ, տ-ձև աղյուսակ, հեղինակային աթոռ, խմբային աշխատանք.

Նպատակները՝ ստեղծել գիտելիքների հիմնավոր պաշար այս թեմայի վերաբերյալ, ինքնուրույն և խմբային աշխատելու կարողություններ և հմտություններ ձևավորել, կարողանալ այս թեմայի յուրացման արդյունքում կատարել առաջադրանքները ինքնուրույն,

Վերջնարդյունքներ՝կկարողանան կատարել գումարում և հանում երկնիշ թվերով

Կկարողանան կատարել չափումներ և անվանական թվերով գումարում և հանում կարգային անցումով

Խաչվող հասկացություններ՝ Պատճառ և հետևանք,օրինաչափություն

Ուս. Նյութերը՝ դասագիրք, աշխատանքային տետր, սլայդ, պաստառ, եթե ունեք այս դասին վերաբերող պաստառ ուրեմն ներառեք

Ընթացքը՝ դասարանում սեղաններն ու աթոռները շարված են կիսաշրջանաձև,

Խթանման փուլ,

Քայլ 1՝ ուսուցիչ-,այսօրվա մեր դասի թեման է երկնիշ թվերի գումարումը և հանումը կարգային անցումով(սլայդի 1-ին էջը)

ուստի գրենք այն միասին մեր տետրերում,

ուսուցիչն էլ գրում է գրատախտակին..

քայլ 2՝ վերհիշում ենք անցած նյութը. դուք արդեն գիտեք, որ միանիշ թվերը բաղկացած են միայն մեկ թվանշանից, իսկ երկնիշ թվերը՝ երկու.

Թվարկենք միասին երկնիշ թվեր.

Աշակերտ՝ 25

Աշակերտ՝ 38

Աշակերտ՝ 99

Աշակերտ՝ 40

Ուսուցիչ՝ շատ ճիշտ է.

Իմաստի ընկալում՝. իսկ այժմ անդրադառնանք այն հարցին, թե ինչպես կարելի է իրականացնել երկնիշ թվերի գումարում և հանում կարգային անցումով.

Ուշադրություն էկրանին.

Միացնում ենք սլայդը.

Քայլ 1՝ միասին վերլուծենք , թե ինչպես կարելի է Կատարել տվյալ երկնիշ թվերի գումարումը.միացնենք սլայդի էջ 3

հաշվենք և գրենք.

Այսպես՝ քանիսն են կապույտ գնդիկները

Աշակերտներ՝ 37

Ուսուցիչ՝ իսկ կարմիրները՝

Աշակերտ՝ 25

Ուսուցիչ՝ գրենք . 37+25 =62

Քայլ 2՝ ուշադրություն դարձնենք գումարելիների միավորներին, իսկ գումարելիների միավորները գումարելիս ստացանք 1 տասնյակ և 2 միավոր.Գումարի մեջ տասնյակների թիվն ավելացավ 1-ով:

Քայլ 3՝ գրենք այս ամենը տետրում

Ուսուցիչը գրատախտակին է գրում բացատրությունը, իսկ սովորողները տետրերում են գրանցում կատարած գործողության մեկնաբանությունը.

Քայլ 4՝ իսկ ինչպես իրականացնենք երկնիշ թվերի հանումը կարգային անցումով, ուշադրություն նկարին.

Քայլ 5՝ հաշվենք կապույտ գնդերի քանակը նայենք, թե որո՞նք են գծված կարմիրով.սլայդի էջ 6

Քայլ 6՝ արձանագրենք դրանք թվերով.

44 -26 = 18

Քայլ 7՝ գրենք այս ամենը տետրում երկնիշ թվերի հանման ժամանակ տասնյակներից մեկը վերածել ենք միավորների.քանի որ մենք 4-6 կատարել չենք կարող վերցնում ենք ևս մեկ տասնյակ 14-6 արդյունքում ստանում ենք 8, մեկ տասնյակ էլ ունեինք , հետևաբար կստանանք 18

Կշռադատման փուլ՝ Իսկ այժմ բաժանվենք 2 խմբի,թիմերից առաջինը կկատարի երկնիշ թվերի գումարումը կարգային անցումով, իսկ մյուս թիմը՝ երկնիշ թվերի հանումը կարգային անցումով.

Թիմային աշխատանք.

Թիմ 1՝	թիմ 2՝

Բոլորը նայում են սլայդի 8-րդ էջին, սովորողներին տրվում է 3 րոպե ժամանակ գործողությունները կատարելու և դրանք ներկայացնելու համար.3 րոպեի ընթացքում թող հնչի դասական երաժշտություն, որպեսզի դասալսողները չձանձրանան.

Սա համարվում է համագործակցային մեթոդ. Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու

բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին. Ժամանակը լրանալուն պես ներկայացնում են իրենց աշխատանքները. Ուսուցիչը պետք է խրախուսի, կարելի է այսպես ասել.

Ուսուցիչ՝ կեցցե՛ք, սիրելի՛ աշակերտներ, երկու թիմերն էլ լավ աշխատեցին, ուստի հաղթող են ճանաչվում, իսկ հասկանալու համար , թե ի վերջո , ո՞ր թիմն է հաղթելու, մենք կիրականացնենք մի այսպիսի խաղ,. Ահա դրված է աթոռ. Այն հեղինակային է. ես կհնչեցնեմ հարց, իսկ ճիշտ պատասխանողը կդառնա հարցի հեղինակ, կգա կնստի այս աթոռին և ինքն արդեն հարցը կհնչեցնի, նա պետք է որոշի , թե ով է պատասխանելու իր հնչեցրաշ հարցին, իսկ եթե պատասխանը ճիշտ լինի , ապա աթոռին կնստի այդ մասնակիցը և հետևաբար կդառնա հարցի հեղինակ, որ թիմից շատ մասնակից նստի այս աթոռին նա էլ կհաղթի,

հարցերը թող հնչեն նախորդ դասերից նույնպես, թող դասալսողները տեսնեն, թե ինչ լավ են յուրացրել սովորողները նախորդ նյութերը, նախապես տվեք հարցերը յուրաքանչյուր աշակերտին, որպեսզի չնստեն աթոռին և մտածեն , թե ինչ հարց են հնչեցնելու, տվեք նաև պատասխանը, քանի որ նրանք դեռ փոքրիկ են ինքնադրսևորվելու համար.այս ամենին հետևելով դուք կհասնեք հաջողության, կստացվի նաև այս մեթոդի կիրառումը, ժամանակը լրանում է, և արդեն պարզ է դառնում, թե ով կհաղթի,

Ուսուցչիչ- այսպիսով հաղթեց թիմ ?

Ես պարգևատրում եմ լավ գնահատականներով,

Հուշում- գնահատականները նշանակում ենք մատյանի մեջ

Իսկ այժմ նշեք տնային աշխատանքը. Վարժ. 287 ա, 301ա

Ուսուցիչ՝ այսօրվա համար այսքանը. ես ցանկանում եմ, որ դուք օրեցօր ավելի իմաստանաք, էլ ավելի լավ սովորեք և դառնաք ձեր իմաստուն ժողովրդին արժանի զավակներ, ցտեսություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցումը համագործակցային է, եթե աշակերտները միասին, զույգերով կամ խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդրի լուծման, թեմայի հետազոտման կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու ուղղությամբ:Ցանկալի է, որ խմբերում ընդգկվեն տարբեր կարողությունների և մտածողության տեր աշա կերտներ:Այս դեպքում խումբը կարող է առաջարկվող նյութը դիտարկել իր ամբ ողջ բազմազանության մեջ:Խիստ կարևոր է խմբում փոխադարձ համագործակցության և փոխօգնության մթնոլորտի ձևավոր ումը:Աշակերտները՝ միմյանց օգնելով, մտքեր փոխանակելով և սովորելու մեջ միմյանց ոգևորելով, ոչ միայն ձեռք են բերում վարքային հմտություններ, այլև անմիջականորեն խթանում են միմյանց ու սումնառությունը, նպաստում ուսման արդյունավետության բարձրացմանը:Ստաց ված արդյունքը դառնում է միաժամանակ խմբի յուրաքանչյուր անդամի գիտելիքը, և տվյալ խմբի աշխատա նքի գնահատման հիմքը:

Խմբերը չեն կարող արդյունավետ համագործակցել, եթե աշակերտները չե ն տիրապետում համատեղ աշխատանքի համար անհրաժեշտ հաղորդակցական հմտություններին:Ուսուցիչը պետք է նպատակաուղղված կերպով ձևավորի երեխ աների հաղորդակցական հմտությունները:Դրանք իրենց մեջ ներառում են ղեկավ արման, որոշումներ կայացնելու, փոխվստահության, հաղորդակցվելու, հակասությունների կառավարման և լուծմա ն կարողություններ:

Նյութն ավելի լավ են յուրացնում խմբերով քան միայնակ աշխատելիս:



ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աստվածատրյան Ա., Վարդումյան Ս. և ուրիշներ, Ուսուցիչների վերապատրաստման գործընթացի կատարելագործումը, Ձեռնարկ ուսուցիչների վերապատրաստման համար, Ե., Այռեքս., 2003:

2. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, տեսություններ, մեթոդներ, գնահատում, Ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար, Այռեքս, Ե., 2003:
3. Սարգսյան Վ. Ա. , Խաչատրյան Հ. , Թորոսյան Կ. , Ջիլավյան Ե. , Մայրենի 3, Երևան, 2021,
4. Սարուխանյան Ս. և ուրիշներ, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2009: